ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-23/13-4

ք. Սպիտակ «07» հուլիսի 2023թ.

Սպիտակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ք. Նիկողոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, գործելու է համատեղ գործունեության պայմանագրով «Այպոշին» ՍՊԸ-ի հետ, ի դեմս տնօրեն Ս. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման, Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման և Կաթնաջուր բնակավայրի հրապարակին հարակից տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2023թ. դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարի: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի

N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 40692000 (քառասուն միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, որից 6782000 (վեց միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

4-րդ չափաբաժին՝ 6312000 (վեց միլիոն երեք հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ, որից 1052000 (մեկ միլիոն հիսուներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին՝ 18180000 (տասնութ միլիոն մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 3030000 (երեք միլիոն երեսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

6-րդ չափաբաժին՝ 16200000 (տասնվեց միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 2700000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[2] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սպիտակի համայնքապետարան	«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
ՀՎՀՀ՝ 06963722	«Ամերիաբանկ« ՓԲԸ
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570021333510100
ՀՀ՝ 900242303023	ՀՎՀՀ 06944032
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«07» հուլիսի 2023թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-23/13-4 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 4

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6
1	Գոյություն ունեցող ավազահավաքի մաքրում բերվածքներից ձեռքով ձեռքով	մ³	1	2.792	2.792
2	Անցքերի բացում գոյություն ունեցող բետոնե վաքի մեջ 500x500մմ	100 հատ	0.01	203.438	2.034
3	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	6	5.320	31.921
4	Գոյություն ունեցող ա/բետոնե ծածկույթի կտրում մեխանիկական սղոցով	100մ	1.2	41.483	49.780
5	4-րդ կարգի բնահողի մշակում խրամուղում էքսկավատորով	1000 մ³	0.134	951.668	127.524
6	Նույնը ձեռքով	մ³	13	4.925	64.022
7	Հիմնատակի կառուցում ավազից 100մմ հաստությամբ	մ³	9	7.844	70.598
8	Պոլիմերային ծալքավոր խողովակների տեղադրում հողի մեջ DN400	մ	95	21.737	2064.991
9	Հավաքովի ե/բ դիտահորի տեղադրում Φ1000մմ /2 հատ/	մ³	1.4	44.311	62.035
10	Հավաքովի ե/բ դիտահորի օղակ Φ1000մմ	հատ	2	34.947	69.893
11	Բետոն դիտահորի հատակի համար B15	մ³	0.9	41.665	37.498
12	Հավաքովի ե/բ դիտահորի ծածկի սալ թուջե մտոցի հետ 1200x1200մմ, Φ700	հատ	2	114.160	228.320
13	Լիցք ավազից տոփանումով	մ³	48	8.403	403.360
14	Բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ³	0.053	106.931	5.667
15	Նույնը ձեռքով	մ³	13	1.162	15.110
16	Բետոն վաքի և խողովակների միացման համար B15 մակնիշի	մ³	0.2	55.716	11.143
17	Խճային նախաշերտի իրականացում 120մմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	0.8	232.184	185.747
18	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում /հաստ. 50մմ/	100մ²	0.8	501.222	400.977
19	Ավելորդ բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000մ³	0.053	696.119	36.894

20	Ավելորդ բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1 կմ	տն	79.5	1.102	87.639
21	Շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ³	2	1.162	2.325
22	Շին աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3 կմ	տն	3.6	1.606	5.780
23	Քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ³	6	1.162	6.974
24	Քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3 կմ հեռ.	տն	12	1.606	19.268
	Ջրահեռացման վաքերի տեղադրում			0.000	
1	Վաքի նախաշերտ ավազակոպիճից 100մմ հաստությամբ	մ³	3	9.338	28.014
2	Հավաքովի ե/բ վաքերի տեղադրում /75գծմ/ 400x300 պատի հաստ. 50մմ	մ³	1.4	33.084	46.317
3	Հավաքովի ե/բ վաքերի արժեքը 75/3=25 հատ	հատ	25	33.782	844.558
4	Վաքի թիկունքային մասի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 շերտ	100մ²	0.83	112.823	93.643
5	Պողպատե ճաղաշարի տեղադրում	տն	0.348	117.396	40.854
6	Պողպատե շվելլերի արժեքը N 8	մ	18	2.912	52.412
7	Պողպատե շվելլերի արժեքը N 6,5	մ	33.3	4.078	135.784
8	Մետաղական ճաղավանդակի յուղաներկում հակակոռոզիոն ներկով	100մ²	0.16	128.459	20.553
9	Բետոն նախագծվող և գոյություն ունեղող վաքերի միացման համար B15 մակնիշի	մ³	0.1	55.716	5.572
	Ընդամենը				5260.000
	ԱԱՀ 20%				1052.000
	Ընդամենը				6312.000

ՉԱՓԱԲԱԺԻՆ 5

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման աշխատանքներ

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6
	Թիվ 1 հենապատ				
1	4-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ³	0.015	1046.419	15.696
2	3-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ³	0.047	775.919	36.468
3	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով	1000մ³	0.025	552.643	13.816
4	Նույնը ձեռքով	մ³	10	4.381	43.812
5	Բնահողի հետլիցք մեխանիզմով հենապատի թիկունքային մասում	1000մ³	0.19	88.353	16.787
6	Նույնը ձեռքով	մ³	8	1.037	8.299

7	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3 կմ	տն	70.5	1.324	93.363
8	Գլաքարի բարձում ա/ինքնաթափին ձեռքով /190մ3/	տն	342	0.806	275.521
9	Գլաքարի տեղափոխում ավտոինքնաթափով	տն	342	1.115	381.200
10	Գլաքարի հավաքում քանդած բնահողի միջից ձեռքով բարձելով ձեռնասայլակին և տեղափոխում մինչև 50մ /5մ3/	տն	9	0.806	7.251
11	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x0,5x0,5մ չափի	հատ	130	0.828	107.600
12	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x1,0x0,5 մ չափի	հատ	130	1.655	215.199
13	Պատի կառուցում գաբիոնների տեղադրումով 2,0x0,5x0,5 մ չափի /ցանցի բջիջը 50x50մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը 2,0 մմ, ամրանը Փ3Բp /	հատ	130	15.034	1954.409
14	Պատի կառուցում գաբիոնների տեղադրումով 2,0x1x0,5 մ չափի /ցանցի բջիջը 50x50մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը 2,0մմ, ամրանը Փ3Բp/	հատ	130	25.333	3293.349
	<u>Թիվ 2 հենապատ</u>				
1	Փողոցի ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	0.2	4.525	0.905
2	4-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ^3	0.005	1046.419	5.232
3	Նույնը ձեռքով	մ^3	2	4.381	8.762
4	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով ե/բ վաքի տակ	1000մ^3	0.0028	552.643	1.547
5	Բնահողի հետլիցք մեխանիզմով հենապատի թիկունքային մասում	1000մ^3	0.002	88.353	0.177
6	Նույնը ձեռքով	մ^3	1	1.037	1.037
7	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3 կմ	տն	7.2	1.324	9.535
8	Գլաքարի հավաքում քանդած բնահողի միջից ձեռքով բարձելով ձեռնասայլակին և տեղափոխում մինչև 50մ /15մ3/	տն	27	0.806	21.752
9	գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x1,0x0,5 մ չափի	հատ	130	1.655	215.199
10	Պատի կառուցում գաբիոնների տեղադրումով 2,0x1x0,5 մ չափի /ցանցի բջիջը 50x50մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը 2,0մմ, ամրանը Փ3Բp/	հատ	15	25.333	380.002
	<u>Ջրահեռացման համակարգ</u>				
1	Ջրահավաքի նախաշերտ ավազակոպիճից տոփանումով	մ^3	0.6	8.185	4.911
2	Հավաքովի ե/բ վաքերի տեղադրում /14գծմ/ 400x300 պատի հաստ. 50մմ	մ^3	0.77	30.407	23.413
3	Հավաքովի ե/բ վաքերի արժեքը 14/3=5 հատ	հատ	5	31.114	155.568
4	Վաքի թիկունքային մասի ջրամեկուսացում բիտումային մաստիկով 2 շերտ	100մ^2	0.16	118.211	18.796
5	Պողպատե ճաղաշարի տեղադրում	տն	0.264	103.737	27.387
6	Պողպատե շվելլերի արժեքը N 8	մ	14	3.755	52.577
7	Պողպատե շվելլերի արժեքը N 6,5	մ	28	3.434	96.141
8	Մետաղական ճաղավանդակի յուղաներկում հակակոռոզիոն ներկով	100մ^2	0.12	115.103	13.812
	<u>Թիվ 3 հենապատ</u>				

1	Կամրջի տակի բերվածքների մաքրում ձեռքով	մ^3	15	1.037	15.561
2	4-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ^3	0.015	1046.419	15.696
3	3-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ^3	0.068	775.919	52.763
4	Նույնը ձեռքով	մ^3	10	2.483	24.831
5	Ծառերի արմատահանում	100հատ	0.06	66.524	3.991
6	Բնահողի հետլիցք մեխանիզմով հենապատի թիկունքային մասում	1000մ^3	0.205	88.353	18.112
7	Նույնը ձեռքով	մ^3	7	1.037	7.262
8	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3 կմ	տն	102.000	1.324	135.079
9	Գլաքարի բարձում ա/ինքնաթափին ձեռքով /187մ3/	տն	336.6	0.806	271.171
10	Գլաքարի տեղափոխում ավտոինքնաթափով	տն	336.6	0.916	308.317
11	Գլաքարի հավաքում քանդած բնահողի միջից ձեռքով բարձելով ձեռնասայլակին և տեղափոխում մինչև 50մ /5մ3/	տն	9	0.806	7.251
12	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x1,0x1,0մ չափի	հատ	96	3.311	317.832
13	Պատի կառուցում գաբիոնների տեղադրումով 2,0x1x1,0 մ չափի /ցանցի բջիջը 50x50մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը 2,0մմ, ամրանը Փ3Բp/	հատ	96	28.552	2740.997
	<u>Թիվ 4 հենապատ</u>				
1	4-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ^3	0.005	1046.419	5.232
2	3-րդ կարգի բնահողի քանդում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ^3	0.021	775.919	16.294
3	Նույնը ձեռքով	մ^3	10	2.483	24.831
4	Բնահողի հետլիցք մեխանիզմով հենապատի թիկունքային մասում	1000մ^3	0.08	88.353	7.068
5	Նույնը ձեռքով	մ^3	4	1.037	4.149
6	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3 կմ	տն	21.5	1.324	28.472
7	Գլաքարի բարձում ա/ինքնաթափին ձեռքով /187մ3/	տն	336.6	0.806	271.171
8	Գլաքարի տեղափոխում ավտոինքնաթափով	տն	336.6	0.916	308.317
9	Գլաքարի հավաքում քանդած բնահողի միջից ձեռքով բարձելով ձեռնասայլակին և տեղափոխում մինչև 50մ /5մ3/	տն	9	0.806	7.251
10	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x1,0x1,0մ չափի	հատ	96	3.311	317.832
11	Պատի կառուցում գաբիոնների տեղադրումով 2,0x1x1,0 մ չափի /ցանցի բջիջը 50x50մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը 2,0մմ, ամրանը Փ3Բp/	հատ	96	28.552	2740.997
	Ընդամենը				15150.000
	ԱԱՀ 20%				3030.000
	Ընդամենը				18180.000

ՉԱՓԱԲԱԺԻՆ 6

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի հրապարակին հարակից տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ

N/N	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	4 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ³	0.03	1040.521	31.216
2	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ³	0.215	868.411	186.708
3	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ³	8	2.587	20.696
4	Հենապատի թիկունքի մասի բնահողի հետլիցք մեխանիզմով	1000 մ³	0.187	95.454	17.850
5	Նույնը ձեռքով	մ³	8	1.077	8.616
6	Ավելորդ բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 0,5 կմ	տն	87	0.511	44.435
	Հենապատի կառուցման աշխատանքներ				
1	Գլաքարի հավաքում տեղափոխում և կուտակում սայլակներով ինքնաթափին մոտ /291մ3/	տն	465.6	0.822	382.666
2	Գլաքարի բարձում ա/ինքնաթափին ձեռքով /291մ3/	տն	465.6	0.466	217.189
3	Գլաքարի տեղափոխում ավտոինքնաթափով 0.5 կմ հեռավորությունից	տն	465.6	0.511	237.803
4	Գլաքարի հավաքում քանդած բնահողի միջից ձեռքով բարձելով ձեռնասայլակին և տեղափոխում մինչև 50մ /15մ3/	տն	24	0.844	20.252
5	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 2,0x1,0x1,0 մ չափի	հատ	137	3.331	456.340
6	Պատի կառուցում գաբիոններից /ցինկապատ գաբիոն ըստ-ГОСТ Р51285-99/ տեղադրումով 2,0x1,0x1,0 մ չափի /ցանցի բջիջը 80x80մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը Ф2,7մմВр ամրանը Ф 6А240С	հատ	137	32.722	4482.889
7	Գաբիոնների բլոկների պատրաստման աշխատանքներ 1,0x1,0x0,5 մ չափի	հատ	64	1.110	71.060
8	Պատի կառուցում գաբիոններից /ցինկապատ գաբիոն ըստ-ГОСТ Р51285-99 /տեղադրումով 1,0x1,0x0,5 մ չափի /ցանցի բջիջը 80x80մմ, ցինկապատ, մետաղալարի տրամագիծը Ф2,7մմВр ամրանը Ф 6А240С	հատ	64	20.124	1287.921
	Տարածքի բարեկարգման աշխատանքներ				
1	Մետաղական կիսախողովակի ապամոնտաժում /վերադարձնելով պատվիրատուին/	տն	2.9	38.761	112.407
2	Կիսախողովակի բետոնե հիմքերի քանդում	մ³	9	10.115	91.035
3	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ³	0.065	868.411	56.447

4	Ավելորդ բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 0,5կմ	տն	97.5	0.511	49.798
5	Շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ^3	9	1.077	9.693
6	Շին աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 0,5 կմ	տն	14.4	0.511	7.355
7	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 80մմ բետոնե հիմքի վրա B-15	գծմ	37	7.472	276.446
7	Բնահողի տոփանում մեխանիզմով	100մ^2	5.47	7.173	39.234
8	Նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ	100մ^2	5.47	82.023	448.668
9	Ավազի շերտ միջին խոշորության 100մմ տոփանումով	մ^3	54.7	9.508	520.070
10	Ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 60մմ, կարերի լցմամբ ց/ա շաղախով	մ^2	547	7.602	4158.189
11	Կարերի ց/ա շաղախ	մ^3	6.6	40.154	265.017
	Ընդամենը				13500.000
	ԱԱՀ 20%				2700.000
	Ընդամենը				16200.000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ
ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
«Ամերիաբանկ« ՓԲԸ
Հ/Հ 1570021333510100
ՀՎՀՀ 06944032

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«07» հուլիսի 2023թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-23/13-4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	20.12.2023թ.
2	Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման աշխատանքներ		
3	Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի հրապարակին հարակից տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ
ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
«Ամերիաբանկ« ՓԲԸ
Հ/Հ 1570021333510100
ՀՎՀՀ 06944032

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«07» հուլիսի 2023թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-23/13-4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	45231177	Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ	1 041 480	1 562 220	1 909 380	2 430 120	3 124 440	3 471 600	3 471 600
5	45231177	Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման աշխատանքներ	2 999 700	4 499 550	5 499 450	6 999 300	8 999 100	9 999 000	9 999 000
6	45231177	Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի հրապարակին հարակից տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ	2 673 000	4 009 500	4 900 500	6 237 000	8 019 000	8 910 000	8 910 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** Պետական միջոցների մասով վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակի համայնքապետարան
Հասցե՝ ք.Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝ Բ. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ
ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
«Ամերիաբանկ« ՓԲԸ
Հ/Հ 1570021333510100
ՀՎՀՀ 06944032

/ստորագրություն/
Կ.Տ